

ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ

(Les affaires sont les affaires)

Կոմեդիա Յ գործողութեամբ

ՕԿՏԱՒ ՄԻՐԲՈՒ

(Թարգմանութիւն Գրանսերէնից)

Ա Բ Ա Զ Ի Ն Դ Ա Ր Ժ Ա Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՏԻԿ. Լ Հ Շ Ա, Ժ Ե Ր Մ Է Ն, Գ Ր Ո Ւ Գ, Ֆ Ի Ն Կ.

(Ամբողջ նախորդ տեսարանի ժամանակ ձերմէնը սաստիկ յուզուած էր: Ամօթ եւ զայրոյթից նա չէր կարողանում զսպել իր բարկութիւնը... Հայրը հեռանում է թէ չէ, նա գնում, սեղանի վրայից վերցնում է իր բերած մի քանի փոքրիկ իբրը):

ԺԵՐՄԷՆ (Մօրը). Թոյլ տներ՝ ես հեռանամ իմ սենեակը... Գլուխս քիչ պտաւում է... ես ինձ լաւ չեմ զգում...

Տ. Լ Հ Շ Ա. Ի՞նչ է պատահել... Դու չես ճաշելու...

ԺԵՐՄԷՆ. Ո՞չ... ես քիչ տկար եմ...

Տ. Լ Հ Շ Ա. (Ուսերը քիչ թօթուելով). Լաւ... գնա...

ԺԵՐՄԷՆ (Կլիսի թեթեւ շարժումով բարեւում է Գրուգին եւ Ֆինկին). Ես, պարոններ, ներողութիւն եմ խնդրում ձեզանից...

ՖԻՆԿ. Խնդրեմ, օրիորդ, խնդրեմ...

Գ Ր Ո Ւ Գ. Շատ ցաւում եմ...

(Ճերմէնը սանդուղքներով բարձրանում, հեռանում է):

ՈՒԹԵՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

Տ. ԼՅՇԱ, ԳՐՈՒԳ, ՖԻՆԿ

ԳՐՈՒԳ. Յոյս ունեմ, որ ծանր չէ օրիորդի հիւանդութիւնը...

Տ. ԼՅՇԱ. Ոչինչ...

ՖԻՆԿ. Գլխացաւ է... անկասկած:

Տ. ԼՅՇԱ. Հա, հա... գլխացաւ է...

ՖԻՆԿ. Ի՞նչ պանչելի օրիորդ...

ԳՐՈՒԳ. Եւ որքմն լուրջ...

Տ. ԼՅՇԱ. Հա, նա շատ քիչ է խօսում, ճիշտն ասած...

Սակայն, պարոններ, նստեցէք, խնդրեմ... Ես ամուսնուս պատճառով ձեր առջև ուղղակի ամօթալի մնացի... նա իր շատախօսութեամբ... իր վրդովմամբ այսրան ժամանակ ձեզ ոտքի վրայ պահեց...

ՖԻՆԿ. Ոչինչ... ոչինչ... (Նրանք աթոռներ վերցնելով՝ նստում են) Ա՛հ, պ. Լըշան բախտաւոր մարդ է...

Տ. ԼՅՇԱ. (Ժնուր կերպով) Շատ... շատ...

ՖԻՆԿ. Ամենուրեք բախտը նրան ժպտում է... Գործեր... ընտանիք... հասարակական դիրք... (Զերքի շարժումով ցոյց է տալիս դղեակը... պարկը եւ դէպ հեռու՝ հորիզոնը) Հիանալի, փառաւոր կալուածք...

ԳՐՈՒԳ. Հազւագիւտ... Այս զէնքերը... այս ծառուղիները... այս պարկը... Մի այսպիսի վեհ, գեղեցիկ տեսարան եւ երբէք չեմ տեսել... Սակայն այս իրծք կիւտովիկոս XIV-իննէ եղել:

Տ. ԼՅՇԱ. Ասում են...

ԳՐՈՒԳ. Հրաշալի է...

Տ. ԼՅՇԱ. (Վճառուած) Շատ է մեծ... շատ... Այսպիսի մեծ շինութիւններին ես չեմ կարողանում ընտելանալ... Ես ուղղակի մոլորւում, կորսւում եմ...

ՖԻՆԿ. Միթէ...

Տ. ԼՅՇԱ. Ես ձեզ հաւատացնում եմ... Ապա այն պահեմ... ծառաները... նրա հսկողութեան և կառավարութեան հազարումի ծախսերը... (Հառաչելով) Եթէ գիտենաք՝ որքմն գլխացաւանք է պատճառում... Շատ ծանր գործ է... շատ... իմ ոյժից վեր է... (Գլուխ շարժելով) Գիտէք ինչ... Արդէն շատ ուշ էր, պարոններ, որ այս կալուածքը մեզ ընկաւ...

ԳՐՈՒԳ. Ի՞նչ էք ասում...

Ֆինկ. Դուք շատ համեստ եք, ես ինձ համար պարծանք կը համարէի, եթէ կարողանայի իմ աշխատանքով, եմ ընդունակութեամբ նուաճել այս բոլորը... ընդհակառակը... հենց այդ է հիացման արժանիք...

Տ. ԼԲՇԱ. Ոչ... հչ... Հարկաւոր է կամ այս յարկի տակ ծնուած լինել... կամ այսուեղ ապրել ջահելութիւնից սկսած... Մեր տարիքն արդէն անցած... մեր նիստ ու կացը... սովորութիւնները դժուար է այժմ փոխել... Թէս տարօրինակ է... առկայն այստեղ, կարծես, ես իմ տանը-դրանը... ինձ մօտ չեմ... ինձ թւում է, որ ես ճանապարհորդում եմ, հիւրանոցում իշած, մի օտար երկրում...

ԳՐՈՒԴ. (Ծիծաղելով) Ա՞հ, ա՞հ...

Տ. ԼԲՇԱ. Այո, այն... Դուրսը դեռ ոչինչ... տանելի է... ծառերը ծառեր են... ծաղիկները՝ ծաղիկներ... բայց սալոններում... սենեակներում... սարսափելի է... Պատերի վրայ կախած այն մեծ պատկերները... իշխանուհիներ իրանց անհամեստ հագուստներով... զինուարներ զրահաւորուած... Երբ ես նրանց մօտով անցնում եմ, նրանք, կարծես, իրանք իրանց հարցնում են. «Ո՞վ է այս գեր կինը... նա այստեղացի չէ, և մենք նրան չենք ճանաչում»: (Տիսուր կերպով շարժում է գլուխը) Սակայն չՅ որ այդ ճիշտ է...

ԳՐՈՒԴ. Դուք շատ անարդար եք թէ դէպի ձեզ և թէ դէպի ձեր երջանկութիւնը...

Տ. ԼԲՇԱ. Իմ երջանկութիւնը... իմ երջանկութիւնը...

Ֆինկ. Իհարկէ... Սակայն պատւական կինը միշտ և ամենուրեք իր տեղն ունի...

Տ. ԼԲՇԱ. Դուք շատ բարի եք... պարոն... Սակայն գիտէք... ես ինքս էլ զգում եմ, որ սա ինձ չէ բռնում, սազ չէ գալիս... ի՞նչ է ինձ հարկաւոր... Մի փոքրիկ անակ, մի փոքրիկ աղախին և մի փոքրիկ պարտէզ... Սա ինձ բոլ-բոլ է... Եթէ իմ ամուսինը լինէր այնպէս, ինչպէս բոլորն են... իրան համար նստէր և խաղաղ վայելէր, ինչ որ կայ... եղածով բաւականանար... դեռ կարելի էր այստեղ մնալ... Բայց ասացէք, իննդրեմ, միթէ խելացի բան է... Մի մարդ, որ այնպիսի ահագին գործեր ունի Պարիզ... զանազան տեսակ ձեռնարկութիւններ... բորսա... թերթ... չը գիտեմ էլ ինչ... որը գալիս է այստեղ երեկոները, այն էլ միայն ամառը... նրան ինչին է հարկաւոր այս բոլորը—այս գղեակը, այս պարկը... Ահագին ծախսեր անէ իզուր տեղից... Այս է պակաս... այն է պակաս... մեքենաներն են փը-չացել, չեն շարժում... փորձեր անօդուա, որ երբէք չեն յաջող-ւում... Դեռ չեմ հաշուում ծառաների ահագին լեզիոնը, որ մեզ

լափում, թալանում է... Փողը սառոյցի նման հայւում, գը-նում է...

ԳՐՈՒԴ. Սակայն չՅ որ պ. Լըշային այդ մեծ բաւակա-նութիւն է պատճառում...

Տ. ԼՇԱՅ. Բաւականութիւն... որ փոխանակ շահ բերելու, ահազին փող է նստում... ոչ, դա բաւականութիւն չէ...

ԳՐՈՒԴ. Վերջապէս պ. Լըշայի դիրքը, որ առանց այն էլ նշանաւոր է, չՅ որ պատգամաւոր ընտրուելուց յետոյ նա նո-րից պիտի բարձրանայ...

ՖԻՆԿ. Նրա գործերի համար դա շատ և շատ կարևոր է...

Տ. ԼՇԱՅ. Պատգամաւոր ընտրուէ...

ԳՐՈՒԴ. Դա հաստատ, աներկրայ գործ է... Նա ինքը մեզ ասաց:

Տ. ԼՇԱՅ. Անտարակոյս... Նա ձեզ շատ ուրիշ բաներ էլ կ'ասէ... Այս երրորդ անգամն է, պարսներ, որ նա դնում է իր թեկնածութիւնը... (Հառաչելով) Ես հէնց այժմեանից դո-ղում եմ... Աստուած իմ, ինչ շիոթ, ինչ հոգս և գլխացաւանք է այդ... Կթէ դուք իմանայիք...

(Մտնում են Խփղոր եւ Լիսիէն):

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, ԼԻԼՍԻԷՆ, ՏԻԿ. ԼՇԱՅ, ՖԻՆԿ, ԳՐՈՒԴ.

ԻՍԻԴՈՐ. (Նայում է նախ իր կնոջը, ապա հիւրերին) Ա՛հ, իմ բարեկամներս, ես ձեզ տեղն ու տեղը բռնեցի... Այդ ի՞նչ էկը խօսում... Ինչ էկը ինձանից բամբասում... Ո՞վ գիտէ՝ ինչեր էք պատմել իմ մասին...

Տ. ԼՇԱՅ. Հը*, կովմ ինչպէս է...

ԻՍԻԴՈՐ. (Չեռքերը շփելով) Ոչինչ... Մի մեծ վիշում է նրա շանը... կը տանք, և նա կ'առողջանայ բոլորովին... չՅ, Գարրօ, ԼիլՍիէն. (Իր լուսնեամբ կասկած է արտայայտում):

Տ. ԼՇԱՅ. Կովին... ոհմ... ուզում ես, որ նա իսկոյն և եթ սատկի...

ԻՍԻԴՈՐ. Լաւ, լաւ... տաւարաբուժութիւնից դու ոչինչ չես հասկանում, իմ ամուսինս... Իսկ ժերմէնն ուր է:

Տ. ԼՇԱՅ. Իր սենեակը գնաց... Տկար է...

ԻՍԻԴՈՐ. Օ՛հ, դարձեալ ջղերը... Ա՛խ, այս ինտելիգենտ... այս գիտնական աղջկերքը... (Chaise-longue-ի մօտով անցնելիս նկատում է ծերմէնի զիրքը, վերցնում է, նայում եւ վեր նետում) Ըն-թերցանութիւն... անտարակոյս... ընթերցանութիւն, միշտ ըն-

թերցանութիւնս... Եւ ոտանաւորներ... Սատանան գիտէ, թէ ինչպէս են հազարումի յիմարութիւններով շմեցնում գուխւները և փչացնում ստամոքսները... (Կոմիկական զզուանքով վայր է զցում գիրը, Ֆինկին) Ոտանաւորներ... Լամարտին... Հիւզօ... Միւսսէ... Գիտեմ դու՝ այդ բնչ է...

Ֆինկ. Ոտանաւորներ...

ԻՍԻԴՈՐ. Այծի կտիտներ... (Ծիծաղում են) Խոկ դու կարդում ես:

Ֆինկ. Բորսայի բիւլետենները... Երկաթուղու գնացքների ժամացուցակը...

ԻՍԻԴՈՐ. Բրաւճ... (Գրուզին) Խոկ դժւ...

ԳՐՈՒԴԻ. Երբեմն ճանապարհին՝ վագոնում... փռքրիկ պատմուածքներ, այս, կարդում եմ...

ԻՍԻԴՈՐ. (Խփելով նրա ուսին) Բանաստեղծ... Խոկ նս... Ես, իմ զաւակներս, երբէք չեմ կարդում... Ես երբէք ոչ մի բան չեմ կարդացել... Եւ ես գրանով պարծենում եմ, պարծենում... Սակայն այդ ինձ չէ խանգարում, որ ես Խիդոր Լըշան լինեմ— Վուզերդիւի դղեակի տէրը... յիսուն միլլիոն փող ունենամ... և մի թերթ, ուր ես վարում եմ քաղաքական, զրականական, փիլիսոփայական և բոլոր այլ բաժինները... (Աշխոյժ, ինքնագոհ, ձեռքերը շփելով քայլում է, Բեմի խորըում կանգնում եւ այդտեղից նայում է իր շուրջը...) Քթամատերը ժիւետի կոնատակերին դրած... զէմքը հրճում է) Ֆինկ... Եւ դու... տամ... տամ... տամ... ինչպէս է...

(Աշխատում է յիշել նրա անունը):

ԳՐՈՒԴԻ. Գրուգ... Վիլհելմ Գրուգ:

ԻՍԻԴՈՐ. Հա... Գրուգ... Զեմ կարողանում այս զահրումարը անունը մտքիս մէջ խոթել, պահել... Եկէք այստեղ... երկուսդէլ... (Ձեռքերի մի մեծ, լայն շարժուածքով ցոյց է տալիս ամբողջ շրջակայքը) Ի՞նչպէս էք գտնում այս տեսարանը...

Ֆինկ. Աքանչելի...

ԳՐՈՒԴԻ. Գիշ առաջ տիկին Լըշայի հետ միասին մենք հիանում էինք...

ԻՍԻԴՈՐ. (Կամաց) Իմ կնոջ... Նա բնչ է հասկանում... նա մի հասարակ կին է... (Բարձր) Ինչ որ այդտեղ դուք տեսնում էք... դէպի աջ... ձախ... ձեր առջեր... յետեր... այն բոլոր դաշտերը... բոլոր այն մարգագետինները... և այ այնտեղ՝ հեռում այն գետը՝ վրան մի մեծ ջրաղաց... ապա բոլորովին խորքում... բլրակների վրայ գտնուող բոլոր անտառները... Այդ ամենը ինձ է պատկանում... Եւ սակայն այս դեռ մի աննըշան մասն է... Եօթ հազար հեկտար հող ունեմ... Երկու նահանգ, ութ գաւառական քաղաք, և քսան և չորս համայնքնե-

բում են գտնուում իմ կալուածքները... Զորս հարիւր տասնեւինն արտ և արօտատեղիներ... Բայց այս ամենը մակարդակի վրայ աւելի լաւ կը տեսնէք... Գարբօ...
ԼիիՍիկն. Պարզն...

ԻՍԻԴՈՐ. Բարի եղէք... Գնացէք, բերէք իմ մակարդակը... Նախասենեակում, դէպի ձախ Մարի-Անտուանետայի սեղանի վրան է... արքայական ճայի մօտ: (Լիւթինը բարձրանում է սանդուղք-ներով) 1898 թւականի դեկտեմբերի ն-ին ես ինքս եմ այդ ճային անձամբ, իմ ձեռքով սպանել... Վալդինոի իմ հովառում... Խնչ ասես՝ իմ կալուածքներում կայ... և բոլորն էլ արքայական... (Գնում է բեմի առաջը) Ութ ժամ է հարկաւոր... որպէսզի կարողանաս իմ կալուածքների շուրջը մի պտոյտ անել... Բայց այս ամենը մակարդակի վրայ աւելի լաւ կը տեսնէք... Վալդ դուք կը տեսնէք նոյնպէս... իմ վաթսուն կթի կովերը... հարիւրերեսուն նզները... ճահճճների ցամաքացնելը... մատղաշառների տնկարանները... իմ ձկնաւազանները... փարախները...
Թինկ. Իոկ որս... շատ կայ...

ԻՍԻԴՈՐ. Խիստ շատ... Սակայն բացի կաթաւից և փառանից դուք իմ ամբողջ կալուածքներում ոչ մի այլ թռչուն չէք գտնիլ...

Թինկ. Այդ լաւ չէ...

ԻՍԻԴՈՐ. Խնչպէս թէ լաւ չէ... Մըթէ դու չը գիտես, որ թռչունները գիւղանտեսութեան ամենաոխերիմ թշնամիներն են... Բարբարոսներ... բայց ես աւելի խորամանկ եմ, քան նրանք... Նրանց բոլորին էլ ես սպանել եմ տալիս... իւրաքանչիւր սպանուած ճնճղուկի համար ես երկու ոռւ եմ վճարում. իւրաքանչիւր խածկաիկի և կարմրալանջի համար—երեք սուր... շիկահաւի—հինգ սուր... եկքանիկի և սոլիսակի—վեց... որովհետև սրանք շատ սակաւ են... Գարնանը՝ ձուերը մէջը թռչունի բնին ես վճարում եմ քսան սուր... Այս ամենը ինձ բերում են տասը մղոն հեռու տեղերից... Եթէ այսպէս տարածուի... մի քանի տարօւց յետ ես կոտորած կը լինեմ ֆրանսիայի բոլոր թռչուններին... (Զեռքերը շփելով) Դեռ այնպիսի բաներ կը տեսնէք դուք այստեղ, իմ բարեկամներս...
Թինկ. (Մասով ցոյց է տալիս ծառուղու մի կէտը՝ դէպի ձախ) Սակայն ներողութիւն, կարծեմ, չեմ սխալում:

ԻՍԻԴՈՐ. Ի՞նչ է:

Թինկ. Մի թռչուն:

ԻՍԻԴՈՐ. (Ուսեր Յօթուելով) Մաղրածնւ...

Թինկ. Ո՛չ, ոչ: Ես շատ լաւ տեսայ... Այ, այ...

ԻՍԻԴՈՐ. Կարմրալանջ է... չա, ճիշտ որ... Այ, դու ան-

պիտան... (Լիւէին մակարդակը ծեռքին դախս է). Այստեղ, այստեղ՝ սեղանի վրայ դրէք: (Լիւէինի ծեռքից մակարդակը վերջնելով, սեղանի վրայ բացումէ) Նայեցէք այստեղ, (Երեքն էլ զլուխները կորացած նայում, հնտեւում են Խսիդրի ծեռքին, որ գնում, գախս է եւ մակարդակի վրայ գծում երկրաչափական բոլոր հնարաւոր ծեւերը): Հիանալի է, չք: Նայեցէք՝ իմ դաշտերը... իմ արօտատեղիները... անտառները... այնպէս պարզ երևում են, կարծես ինքդ անձամբ, փայտդ ձեռքիդ, զբօնում ես... Ուշադրութիւն դարձրէք... այս կարմիր քառակուսիների վրայ...իմ քսան ադարակներն են դրանք... Ահա այն հովիտը, ուր ես սպանեցի արքայական ճային...

Ֆինկ. Այս ինչ է... այս բաց-կանաչը...

ԻՍԻԴՈՐ. Դա իմ լճակն է, ուր ես ահազին ծածաններ եմ պահում, ինչպէս այդ անում էին Ֆրանսական արքանները Ֆոնտենբլում: Հետեւցէք ինձ... Սա...

Տ. ԼԲՇԱ. Դու այս պարոններին յոգնեցնում ես... գուցէ նրանք կը ցանկանային նախ քան ճաշը՝ իրանց անեակները գընալի...

ԻՍԻԴՈՐ. Միթէ ես ձեզ յոգնեցնում եմ... Բս... իմ այս մակարդակով...

ԳՐՈՒԴ. Բնաւ... բնաւ ոչ...

ԻՍԻԴՈՐ. (Կամաց) Նա բոլորովին հասարակ կին է: (Բարձրածալն, Ֆինկին) Աւելի լաւ է՝ գլխարկդ վերցրու... Հայելիս քեզ խանգարում է... (Ինքը վերցնում է Ֆինկի զիսից նրա զիսարկը եւ դընում սեղանի վրայ): Նայիր այս մեծ սպիտակ տարածութեան, որ աջ կողմից գալիս, ներս է խոթւում իմ կալուածքի մէջ... Դա Պորսելլէն է... մարկիզ զը Պորսելլէի հողերը... ծեր դատարկաշրջիկ, դատարկապօրտի, որին ես մի միլիոն երկու հարիւր հազար ֆրանկ անշարժ գրաւականով պարտք եմ առեւել... Հիանալի կը լինի, չք. Վոպերդիւ և Պորսելլէ միացնել և մի կալուած շինել... հ՞ը...

Ֆինկ. Փառաւոր...

ԻՍԻԴՈՐ. Դա արդէն վերջացած զործ է, իմ զաւակներս... եթէ այսօր չէ, դա կը լինի վազը... Այ, վազը դուք կը տեսնէք, թէ ինչպէս է Խսիդր Լըշան վարւում ազնւական-շրջմուլիկների հետ... Որքան պիտի ծիծաղենք...

Տ. ԼԲՇԱ. Դարձեալ նոր կալուածք... դարձեալ դղեակ... Եղածք բաւական չք, Աստուած իմ... Դու ուզում ես, որ ես բոլորովին իսենթանամ...

ԻՍԻԴՈՐ. (Ուսերը Թօնուելով) Կալուածք... միթէ դա դժբախտութիւն է... Դու հէնց շարունակ արտնշամ...

Ֆինկ. Սրանք ինչ են... այս պատիկ մարդիկը... զոյնը դոյն... որ ցատկում, ոստոստում են մակարդակի իւրաքանչիւր մասում...

ԻՍԻԴՈՐ. Դու չես գուշակում:

Ֆինկ. Ո՞չ...

ԻՍԻԴՈՐ. Դա իմ պատկերն է... խոշորացոյցով շատ նման է ինձ... Լաւ միտք է, չեմ... նայելիս իսկոյն երեսում է, թէ ում է պատկանում այս կալուածեցը... (Մատով ցոյց է տալիս մակարդակի բոլոր գծերը): Այս փոքրիկ կանաչագոյն շեղանկիւնը... դա իմ զտարանն է... ուր ես զետեղել եմ վերջին սիստեմի մի լաւ լաբորատորիա... (Դառնալով գեպի լիւսիէնը) Ահա և իմ քիմիկոսը... մի հիանալի տղայ... ապագայ գիտնական... որի հետ այժմ մնաք զարմանալի փորձեր ենք անում... փորձեր... ինչպէս է... Գարբօ...

ԼիլիՍիէն. Պարո՞ն...

ԻՍԻԴՈՐ. Ինչպէս էք դուք անուանում այն փորձերը, որ ես անում եմ այժմ:

ԼիլիՍիէն. Բուսական բիոլոգիայի փորձեր:

ԻՍԻԴՈՐ. Համար բիոլոգեականն... Հասարակ բան չէ... համարդեականն արանց իմ գիտը... Օ՞ն յառաջ... (Նա մակարդակը գլորում է և նրան շարժելով) Ե՞ս երկրագործ չեմ... այլ ագրոնոմ... լաւ ըմբռնեցէք տարրերութիւնը... ագրոնոմ... Դա կը նշանակէ, որ ես երկիրը մշակում եմ ոչ իբրև մի հասարակ մարդ, այլ որպէս մի ինտելիգենտ, մի անտեսագէտ, մի ժամանակակից, modernie մտածող... Այլևս էլ ոչ ցորեն... ոչ գարի... ոչ վարսակ... զրանց վերջն է... այլևս պահանջ չը կայ... դըրանք այլես չեն ծախւում... Այժմ ուրիշ բան է հարկաւոր... Ամեն ինչ յառաջադիմում է, ժամանակի պահանջները բազմանում և փոխում են... Եթէ մարդկութիւնը յետադէմ է և պահպանողական, այստեղից չէ հետեւում, որ ես ես, ես՝ իսկդոր լըշա՝ սոցիալիստ ազգոնոմ, յեղափոխական տնտեսագէտս... ես ևս լինեմ յետադէմ և պահպանողական... Հետեաբար,—լաւ լըսեցէք ինձ,—ես ցանում եմ բրինձ... տնկում եմ թէյ... սուրճ... շպարեղէզն...

(Ֆինկ եւ Գրուգ քիչ ապշած են):

S. ԼՀՇԱ. (Ուսերը Թօթուելով) Դարձեամ:

ԻՍԻԴՈՐ. (Իր կնոջը) Էլ ինչ դարձեալ... Դու քո գրուած-քով զբաղուիր... (Աւելի վստահութեամբ) շաբարեղէզն... (Քիչ լուր-թիւնից յետոյ ինժեներներին)... Իսկ դուք... կարծես թէ չեք հասկանում...

**Տ. ԼՀՇԱ. Բաւական է, իմ բարեկամո... ես քեզ խնդրում
եմ...**

**ԻՍԻԴՈՐ. 0՞հ, ինձ հանգիստ թաղ... Ախեր հասարակա-
կան մեծ խնդիրների մասին կանաքը ինչ կարող են հասկա-
նալ... Սակայն սա մի շատ պարզ բան է... Այս իմ նոր սիստե-
մով ես հողագործութիւնը հչ միայն ազատում եմ բուտինայի
ճանկերից, այլև վերջ եմ դնում կոլոնիաներին... հետևաբար և
պատերազմին... Ել հչ մեծածախս արշաւանքներ՝ գաղթակա-
նութիւններ հաստատելու... հչ արիւնայեղջ նուաճումներ... Կո-
լոնիաներն այստեղ՝ քեզ մօտ, քո տանը-դրանը... (Ծիծաղելով
ձեռքերը շփում է) Հնդկաստան... Զինաստան... Աֆրիկա... Տոն-
կին... Մադագասկար... այստեղ՝ քեզ մօտ... Դուք ապշած էք,
խոստովանեցէք... Կարող էիք այդպիսի գիւտ դուք ինքներդ ա-
նել, հ՞ը...**

Ֆինկ. իհարկէ, սկզբում...

ԳՐՈՒԹ. Քիչ անհաւատալի է թւում...

**ԻՍԻԴՈՐ. Ինչպէս առհասարակ բոլոր մեծ գիւտերը... Յե-
տոյ նրանց ընտելանում, սովորում են... 0՞հ, ես գիտեմ ձեր
առարկութիւնը... թէ նրանք չեն բումնիլ... Մենք կը տես-
նենք... (Գոռողութեամբ եւ կատաղաբար) Ինչ որ ես կամեցել եմ...
իրագործել եմ... Ես ցանկացայ հարստանալ... հարստացայ...
Ես ցանկացայ այս դղեակին տիրանալ... տիրացայ... Ես կամե-
նում եմ Պորսելլէն... և կ'ունենամ... Ես կամենում եմ այստեղ՝
ինձ մօտ շագարեղէցն բումի... և կը բումի... Այնպէս չէ,
Գարրօ... Այն, այն... Հարցը միայն պարարտացման մէջն է... Եւ
ես այնպէս եմ համոզուած դրա մէջ, որ ընտրութիւններին ես
հէնց այդ տնտեսական, զիտական և հումանիտարական ծրագը-
րով եմ դուրս գալիս և իմ թեկնածութիւնը դնում... Սակայն
դուք երեակայում էք՝ մեր գաւառի պատերի վրայ այս տեսակ
աֆիշաներ... Խօսիոր Լըշա... սոցիալիստ-ազրոնոմ... հակակղե-
րական և նոր-գաղթականութեան հիմնադիրը...**

Տ. ԼՀՇԱ. (Կաղկանծիւն ծայնով) Վեց հարիւր քուէ..

ԻՍԻԴՈՐ. Դու ինչ ես այդտեղ խօսում...

**Տ. ԼՀՇԱ. Վեց հարիւր քուէ, որ քեզ կ'արժենայ վեց հա-
րիւր հազար ֆրանկ, ինչպէս միշտ... (Տաքանալով) Դու՝ հակա-
կըղերական... Սակայն հէնց ուր մի փոքրիկ ցաւ ես զգում...
շնուռ... շնուռ մի քահանայ... (Գրուզին եւ Ֆինկին) Եթէ սրան
ականջ դնենք... այն խեղճ քահանան այստեղից պիտի չը հե-
ռանայ... սրա կողքին նստած, շարունակ սրան հաղորդելիս...**

Այն, այսո... վեց հարիւր քուէ:

ԻՍԻԴՈՐ. (Ատամեները կրնտացնելով ծիծաղում է, Գրուզին եւ

Ձինսկին բեմի խորքը հրեկով) Հէ, հէ, հէ... Նա մի տարօրինակ կին է... Խնդն էլ չը զիտէ՛ թէ ինչ է ասում... Նա միայն ծիծաղելու համար է այդպէս խօսում... Նա զառանցանքների մէջ է... Ա՛հ... Քահանանաները... բոյալիստները կը տեսնեն, կ'իմանան այդ անպիտանները... Ես նրանց ցոյց կը տամ... (ձաշի առաջին զանգը) Գնանք ճաշենք... (Վերադառնում է բեմի առաջ... Տիկ. Լըշա Թեւանցով բարձրանում է սանդուղքով):

Տ. ԼՀՇԱ. Ես չը գիտեմ՝ այլևս ինչի համար է հեռախօսն այնտեղ դրած... թողնես՝ առանց նախազգուշացնելու հէնց հըրաւիրի ու հրաւիրի... ԻՄԻԴՈՐ. (Վերցնելով Գրուզի Թեւը... Խոճանարութեամբ) Ներիր նրան... հասարակ կին է... սովոր չէ...

(Հանդիսաւոր կերպով մտնում են եօթը նոր հիւրեր)

ՏԱ.ՄՆԵՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵԽՆՈՅՑ ԱՆԶԻՆՔ, յետոյ ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱՒՈՐԸ և ԻՐ ԿԻՆԸ, ԲԺԻՇԿԸ և ԻՐ ԿԻՆԸ, ՀԱՐԿԱՀԱՆԸ և ԻՐ ԿԻՆԸ, ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԶՈՐԱՊԵՏԸ

Տ. ԼՀՇԱ. (Այբոքը պլած, սարսափահար) Այս ինչ կը նշանակէ... սրանք հվերեր են...

ԻՄԻԴՈՐ. (Ձեռքը ճակատին խփելով) Ա՛խ... ճիշտ... մարեկուրցիները... Սատանան տանի... Ես նրանց հրաւիրել էի. Միթէ ես քեզ չեմ յայտնել...

Տ. ԼՀՇԱ. (Բոլորովին ապշած) Դու նրանց հրաւիրել ես... ԻՄԻԴՈՐ. Ճիշտն ասած, հա...

Տ. ԼՀՇԱ. Իսկ մտածել ես դու արդենք... Ես նրանց ընդունել չեմ կարող:

ԻՄԻԴՈՐ. Լաւ, լաւ:

Տ. ԼՀՇԱ. (Արագ-արագ սանդուղքներից իջնելով) Ի՞նչպէս կարող եմ ես այս բոլոր մարդկանց կերակրել...

ԻՄԻԴՈՐ. Ընարսղներ... բարեկամներ են...

(Վագում, գնում է աղմակի կերպով նրանց ընդունում, բարեւում)

Տ. ԼՀՇԱ. (Յուսահատ կերպով) Ա՛խ, Աստուած իմ:

(Բոլորովին ապուշ կտրած նույում է իրան մօտեցող հիւրերին)

ԻՄԻԴՈՐ. (Անցնելով մէկից միւսը) Իմ սիրելի բժիշկս... Իմ սիրելի դատաւհրս... Տիկին...

ՀԱՇՏ. ԴԱ. Մենք քիչ ուշացել ենք:

ԻՄԻԴՈՐ. Ո՛չ, ո՛չ... մենք ենք քիչ շտապել...

ՀԱՇՏ. ԴԱՏ. ԿԻՆԸ. (Ցիկ. Լըշային) Սիրելի տիկին, մենք ձեզ սպասեցնել ենք տուել...

ԲԺ. ԿԻՆԸ. Ներեցէք... ճանապարհն այնքան երկար էք... օմիքուսը գալիս էք, գալիս... չէք վերջացնում...

(Փոխաղարձ բողոք, սիրավերութիւններ... Խսիդորը յուզում է, սրա-նրա ձեռքը նորից եւ նորից սեղում... մէկի, միւսի ուսին զարկում):

ԻՍԻԴՈՐ. (Զօրապետին) Հ՞ը... զօրապետ... ինչպէս է ձեր ուկրացաւը:

ԶՕՐԱՊԵՏԸ. Դրա մասին միք խօսիլ... (Փորձում է ծունկը շարժել) Ա՛խ, այս անիծուածը:

ԻՍԻԴՈՐ. Sandow ընդունեցէք, զօրապետ, Sandow... Հա... զինուորական մինիստրին ես տեսայ:

ԶՕՐԱՊԵՏԸ. Հ՞ը, ինչ ասաց:

ԻՍԻԴՈՐ. Ահա թէ ինչ... (Զօրապետին քաշում տանում է: Հարկանի մօտով անցնելիս) Հա, գիտէք, ես տեսնուեցայ ֆինանս-ների մինիստրի հետ:

ՀԱՐԿԱՀԱՆԸ. Հ՞ը, ինչ ասաց:

ԻՍԻԴՈՐ. Ահա թէ ինչ... (Հարկանի ինը քաշում, տանում է):

(Ցիկինները խօսում, պտտում են տիկ. Լըշայի շուրջը: Հարկանի նը եւ բժիշկը խօսում են լիւսիէնի հետ... Այս աղմուկ եւ իրարանցման ժամանակ Ֆինի եւ Գրուգ մի կողմ են քաշուել):

ԳՐՈՒԳ. Դա մի անասուն է...

ՖԻՆԻ. Գուցէ...

ԳՐՈՒԳ. Մի խենթ... Ես կարծում եմ, մենք շատ հեշտու-թեամբ կարող ենք սրա հետ մեր ցանկացածն անել:

ՖԻՆԻ. Ո՞վ գիտէ... Հարկաւոր է այսպիսի խենթերից եր-բեմն զգուշանալ... Նրա աչքերին նայեցէք... սարսափելի են նրանք...

ԳՐՈՒԳ. Լաւ, է:

ՖԻՆԻ. Զէ, զգուշանալ է հարկաւոր... Ես ճանաչում եմ սրա նմաններից մի քանիսին... ամենավտանգաւոր մարդիկը հէնց դրանք են:

ԳՐՈՒԳ. Դուք միշտ միենոյնը կը մնաք... Ո՛չ մի հոտա-ռութիւն...

ՖԻՆԻ. Իսկ դուք՝ զուրկ աչքերից... Նայեցէք... Նրան նա-յեցէք...

ԳՐՈՒԳ. Մի մարդ, որ անընդունակ է նոյնիսկ փողի մի-ջոցով պատգամաւոր ընտրուել:

ՖԻՆԻ. Որը սակայն ընդունակ կը լինի մեզ խարել...

ԳՐՈՒԳ. Ես կը ցանկանայի այդ տեսներ:

ԻՍԻԴՈՐ. (Բեմի խորքում, մի խմբի մէջ կանգնած) Դուքս դը
Մոժին... Այն խոշոր դեղձանիկը... Այժմ նա ոչնչացրուած է:
(Տիծաղում են):

S. ԼԲՇԱ. (Դեռ եւս բոլորովին յուզուած՝ իրան շրջապատող ան-
ձանց) Ներեցէք, խնդրում եմ... Մի ամենահամեստ ճաշ ունենք
մենք այսօր:

ԻՍԻԴՈՐ. (Վերապանալով սրանց մօտ) Մի ամենահամեստ,
ընտանեկան մի ամենահամեստ ճաշ:

ԲԺՇԿԻ ԿԻՆԸ. Ամենալաւերը հէնց դրանք են...

S. ԼԲՇԱ. Սակայն...

ԻՍԻԴՈՐ. Լաւ... լվաւ Յարգելի տիկիները ուտելու հա-
մար չեն եկել... այլ քեզ այցելելու, քեզ հետ ժամանակ անց-
կացնելու: (Լիսիէն մօտենում, հրաժեշտ է առնում) Ի՞նչպէս, իսկ
դուք ճաշին չեք մնում:

ԼիլիՍիէն. Ո՛չ, պարոն, չնորհակալ եմ...

ԻՍԻԴՈՐ. Անշուշտու սիրային արկածներ կը լինեն... այս
երեկոյ... Զբ որ ջահիլ էք... Սակայն պարարտացման գործը
չը մոռանաք, իմ սիրելի տղասու... Մտածեցէք... աշխատեցէք...
(Հնչում է ճաշի երկրորդ գանգը) Պարոններ, ձեր թները տիկին-
ներին առաջարկեցէք:

(Սպասաւորները զալիս եւ հանդիսաւոր կերպով շարում են սան-
դուղի երկու կողմու զանդիսաւոր գնացք... Սիրալիրութիւններ... կո-
տըրտուել)

S. ԼԲՇԱ. (Հաշտարար դատաւորի հետ Թեւանցուկ՝ սանդուղքը բար-
ձրանալով) Երեւակայեցէք, ես չեմ կարողանում իմ ամուսնուս
ստիպել... որ ինձ հեռախոսով յայտնի:

ՀԱՇՏԱՐԱՄՐԴ. ԴԱՏԱԿՈՒՐԸ. Պարոն Լըշան այնքան զբաղ-
մունքներ ունի...

ԻՍԻԴՈՐ. (Հաշտարար դատաւորի կնոջ հետ Թեւանցուկ զնում է
հանդիսաւոր գնացքի վերջին. դիմուլ իր առջեւից զնացող հարկանանին) Մի երեկի յօդուած կայ «Petit Tricolore»-ի այսօրուայ հա-
մարում... ցորենի մասին է: Զեզ խորհուրդ կը տայի կարդալ:
(Հաշտարար դատաւորի կնոջը) Փոքրիկ Ռամպոնի գրածն է, կար-
ծեմ որ դուք նրան այստեղ տեսած պիտի լինէք...

ՀԱՇՏ. ԴԱՏ. ԿԻՆԸ. Պ. Ռամպոն... Խարտեաշ մազերով,
փոքրիկ, զուարձախօսը... նա...

ԻՍԻԴՈՐ. Այն...

ՀԱՇՏ. ԴԱՏ. ԿԻՆԸ. Որ այնպէս լաւ կատարում է Սարահ
Քերնարի ձեւերը...

ԻՍԻԴՈՐ. Հա, հէնց դա...

ՀԱՇՅ. ԴԱՏ. ԿԻՆԸ. ՈՐ ՔԹՈՎ... ոտով... դաշնամուր է
նոռագում...

ԻՍԻԴՈՐ. Ա.Ա.Ն ԻՆՉՈՎ... իսկ և իսկ դա... նա ստորագը-
րում է՝ Պարսիֆալ... Մի հիանալի տղայ է... Եւ երսելի տնտե-
սագէտ...

(Նրանք գնում, անհետանում են)

ՏԱ.ՄՆՄԷԿԵՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

ԼԻԼԻՄԻԷՆ, յետոյ ԺԵՐՄԻՆ, ապա ԵՐԿՈՒ ՍՊԱՍԱՀՈՐ

(Լիլիմիէնը բեմի վրայից յի հնուացելը. Օրը կամաց-կամաց մթնում
է.. սանդուղքի աշտանակները վառուած են, Լիլիմիէնը նայում է, դէպի դը-
ղեակը: Այն բոպէին, երբ նա ուզում է հնուանալ, դղեակի անկիւնի յե-
տեւկց դուրս է գալիս Ժերմէնը և դէպի Լիլիմիէնը վազում):

ԺԵՐՄԻՆ. Այդ դժու ես... (Լիլիմիէնն շտապով վերադառնամ է
Ժերմէնի մօտ) **Վերջապէս...** Ես կարծում էի՝ թէ նրանք այստե-
ղից չը պիտի գնային, հնուանային... (Ընկնելով նրա դիրկը) Լիլ-
իմիէն... իմ սիրելի Լիլիմիէնս...

ԼԻԼԻՄԻԷՆ. (Նրան ամուր զրկելով) Իմ թանգագին Ժերմէն...
Որքան թշուառ... որքան անհանգիստ էի, որ չը կարողացայ
քեզ նորից տեսնել... նայիր ինձ... լաւ նայիր... (Բռնելով նրա
պլուխը) Դու հիւանդ ես...

**ԺԵՐՄԻՆ. (Գլուխը Լիլիմիէնին ուսին դնելով և փաղաքշելով) Ո՛չ...
աչ...**

ԼԻԼԻՄԻԷՆ. Դու լաց ես եղել...

ԺԵՐՄԻՆ. Ո՛չ... ես քեզ հաւատացնում եմ... ոչ:

ԼԻԼԻՄԻԷՆ. Իսկ քիչ առաջ ինչու հեռացար...

ԺԵՐՄԻՆ. (Ճառաչելով) Ես այլևս չէի կարող... Զէի կարո-
ղանում այնս ինձ վրայ իշմել... Այդ տեսարաններն ինձ վրայ
շատ վատ են ազդում... Այս կեանքն ինձ սպանում է... Ամօթ...
բարկութիւնից և զայրոյթից ես խեղդում եմ այս տան մէջ,
ուր ամեն օր, ամեն բոպէ կատարում է մի անարդարութիւն
և մի դժբախտութիւն, եթէ ոչ մի իսկական ոճիր... Ես այլևս
չեմ կարող... (Խոր հառաջանք բաշխով) Ես այլևս չեմ կարող...

**ԼԻԼԻՄԻԷՆ. (Նայելով իր շուրջը) Զգայշ... Կաըռղ են մեզ տես-
նել... լսել...**

**ԺԵՐՄԻՆ. Օ՛հ, Աստուած իմ... թղի լսեն... Ի՞նչ նշանա-
կութիւն ունի դա ինձ համար... և քեզ համար... (Զղային յուղ-**

մունքով) Մեր յարաբերութիւններն այս կէտին հասնելուց յետոյ այլև ինչ կայ...

ԼիլՍիէն. (Քաղցրութեամբ եւ քննչութեամբ) Հանգստացիր, սիրելիս... ես քեզ աղաչում եմ...

ԺԵՐՄԵԿՆ. (Դողալով) Սակայն ինչպէս հանգստանամ... (Լռութիւն) Հա, հա... դու այստեղ ես այժմ... Որքան քաղցր է... (Փաթաթում է Լիւսիէնին, որը նրան քերում, մօտեցնում է մարմարէ պատւանդանին) Որքան լաւ է... (Լռութիւն) Դու չես կարող երեակայել՝ որքան ինձ վրայ լաւ է ազդում, ինչպէս ինձ տաքացընում, ոգնորում է, որ դու այստեղ ես, այստեղ, ինձ մօտ, ինձ գրկած... ինձ հետ խօսելիս... ինձ օրօրելիս... (Լռութիւն) Տեսնում ես, ես այլևս ջղային չեմ, ոչ էլ յուզուած, տխնւր... ես գոհ եմ... (Լռութիւն) Գոհ... շատ, շատ գոհ... (Աղերսական ծայսով) Եթէ դու կամենաս... (Նայում է նրան երկար եւ... խանդագորով) Լիւսիէն...

ԼիլՍիէն. Ի՞նչ է, սիրելիս:

ԺԵՐՄԵԿՆ. Տար ինձ այստեղից... Ազատիր, հանիր ինձ այստեղից... (Լիւսիէնը մի շարժում է անում) Հա... հա, ինդրում, աղաչում եմ քեզ... խղճա, տար ինձ... հեռու... թէկուզ թըշուառութեան մէջ լինեմ քեզ հետ... միայն հեռու... հեռու այստեղից... Ահ, որպիսի փրկութիւն...

ԼիլՍիէն. Զգոյց:

(Մի սպասաւոր սանրուցներից իշխելով որոնում է տիկ. Լըշայի ծածկոցը, որ գտնում, տանում է... ժերմէնը եւ Լիւսիէնը ծառերի տակ թագնուել էին... Սպասաւորի հեռանալուց յետոյ նրանք վերադառնում են, գրկանառնուած, ծանր, լուռ, որպէս ստուերներ, զայս անցընում են բեմի վրայով դէպի ծախս եւ անհետանում):

(Վ. Բ. Ա. Գ. Ռ Յ Բ)

Թարգմ. Ա. ՇԽԵԱՆՑ

(Պը շաբունակուի)